Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
առաջին խորհրդական



Խաղաղություն այս կայնքում

Բոլորին, ովքեր եկել են մահկանացու կյանք, Փրկիչն ասել է. «Աշխարհքումը նեղութիւն կունենաք» (Հովհաննես 16.33)։ Սակայն Իր մահկանացու ծառայության ընթացքում Իր աշակերտներին Նա տվեց այս հրաշալի խոստումը. «Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ» (Հովհաննես 14.27)։ Մխիթարող է իմանալը, որ անձնական խաղաղության այս խոստումն ուժի մեջ է այսօր Նրա բոլոր աշակերտների համար։

Մեզանից ոմանք ապրում են զեղեցիկ ու խաղաղ միջավայրում, սակայն ունենում են ներքին իրարանցում։ Ուրիշներն էլ խաղաղություն և կատարյալ անդորր են գտնում անձնական մեծ կորուստների, ողբերգությունների և շարունակվող փորձությունների մեջ։

Դուք միգուցե տեսել եք խաղաղության հրաշքը Հիսուս Քրիստոսի աշակերտի դեմքին կամ լսել եք այն նրա խոսքերում։ Ես բազմիցս տեսել եմ դա։ Երբեմն դա եղել է հիվանդասենյակում, որտեղ ընտանիքը հավաքված է եղել Աստծո ծառայի կողքին, ով մոտ էր կնքելու իր մահկանացուն։

Ես հիշում եմ իմ այցը հիվանդանոցում գտնվող մի կնոջ, ով մի քանի օր անց մահացավ քաղցկեղից։ Ինձ հետ ես բերել էի իմ երկու դեռահաս դուստրերին, քանի որ այս հրաշալի քույրը մի ժամանակ Երեխաների Միության նրանց ուսուցիչն էր։

Ընտանիքի անդամները հավաքվել էին անկողնու կողքին՝ ցանկանալով կիսել նրա հետ այս աշխարհում անցկացրած նրա վերջին րոպեները։ Ես զարմացա, երբ նա նստեց անկողնում։ Նա դարձավ դեպի իմ աղջիկները և նրանց մեկ առ մեկ ներկայացրեց իր ընտանիքի յուրաքանչյուր անդամին։ Նա այնպես էր խոսում, կարծես իմ աղջիկներն ազնվականներ էին, որոնց ներկայացնում էին թագավորական ատյանում։ Նա կարողացավ սենյակում գտնվողներից յուրաքանչյուրին ներկայացնել որպես Փրկիչի աշակերտ։ Ես դեռևս հիշում եմ այն ուժը, քնքշանքը և սերը, որ առկա էր նրա ձայնում։ Հիշում եմ, որ ինձ զարմացնում էր նրա ուրախ ժպիտը, չնայած նա գիտեր, որ կարճ ժամանակ էր մնացել իրեն։

Նա ստացավ քահանայության մխիթարող օրհնություններ, իսկ ինքը մեզ բոլորիս տվեց կենդանի վկայություն, որ Տիրոջ խաղաղության խոստումն իրական է. «Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին» (Հովհաննես 16.33)։

Նա ընդունել էր Նրա հրավերը, ինչպես և մենք բոլորս էլ կարող ենք ընդունել՝ անկախ մեր դժվարություններից.

«Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կ’տամ ձեզ։

Ձեզ վերայ առէք իմ լուծը եւ ինձանից սովորեցէք. որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերի համար հանգստութիւն կգտնէք» (Մատթեոս 11.28-29):

Փրկիչին հետևելու միջոցով է միայն, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է գտնել խաղաղություն և հանգստություն դժվար պահերին, որոնց բոլորս էլ կհանդիպենք:

Հաղորդության աղոթքներն օգնում են մեզ իմանալ, թե ինչպես գտնել այդ խաղաղությունը կյանքի դժվար պահերին: Մինչ մենք ընդունում ենք հաղորդությունը, մենք կարող ենք որոշել հավատարիմ լինել Նրան հետևելու մեր ուխտերին:

Մեզանից յուրաքանչյուրը խոստանում է հիշել Փրկիչին: Դուք կարող եք Փրկիչին հիշելու համար ընտրել այն ուղին, որով ձեր սիրտն ավելի է մոտենում Նրան: Երբեմն ինձ համար դա Նրան իմ մտքում տեսնելն է Գեթսեմանիի պարտեզում ծնկի իջած կամ Ղազարոսին գերեզմանից դուրս կանչելիս: Այդ պահերին ես ինձ Նրան ավելի մոտ եմ զգում և լցվում երախտագիտությամբ, ինչն էլ խաղաղություն է բերում իմ սրտին:

Դուք խոստանում եք նաև պահել Նրա պատվիրանները: Դուք խոստանում եք ձեզ վրա վերցնել Նրա անունը և լինել Նրա վկան: Նա խոստանում է, որ եթե դուք պահեք Նրա հետ կապած ձեր ուխտերը, Սուրբ Հոգին կլինի ձեզ հետ: (Տես ՎԵՈՒ 20.77, 79:)

Սա խաղաղություն է բերում առնվազն երկու եղանակով: Սուրբ Հոգին մաքրում է մեզ մեղքից Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Եվ Սուրբ Հոգին կարող է տալ մեզ խաղաղություն, որը գալիս է Աստծո հավանությունը և հավերժական կյանքի հույսն ունենալուց:

Պողոս Առաքյալը խոսել է այս հրաշալի օրհնությունների մասին. «Բայց Հոգու պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հավատք» (Գաղատացիս 5.22):

Երբ երկնային սուրհանդակներն ավետեցին Փրկիչի ծննդյան մասին, նրանք հայտարարեցին. «Փառք Աստուծոյ բարձունքումը, եւ երկրի վերայ՝ *խաղաղութիւն*» (Ղուկաս 2.14, նշումներն ավելացված են): Ես բերում եմ իմ վկայությունը որպես Հիսուս Քրիստոսի վկա, որ Հայրը և Նրա Սիրելի Որդին կարող են ուղարկել Հոգուն՝ թույլ տալու մեզ խաղաղություն գտնել այս կյանքում, անկախ այն փորձություններից, որոնց կհանդիպենք մենք և նրանք, ում մենք սիրում ենք:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Այրինգն ուսուցանում է, որ հաղորդության աղոթքները կարող են օգնել մեզ իմանալ, թե ինչպես խաղաղություն գտնել մեր փորձությունների ընթացքում: Դրանք հիշեցնում են մեզ, որ մինչ մենք պահում ենք մեր ուխտերը, մենք ունենք Աստծո խոստումը, որ Սուրբ Հոգին կլինի մեզ հետ: Հարցրեք նրանց, ում ուսուցանում եք, թե Սուրբ Հոգին մեզ հետ ունենալն ինչպես կարող է օգնել մեզ խաղաղություն ունենալ: Կարող եք կիսվել նաև ձեր մտքերով և փորձառությամբ, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնել ձեզ խաղաղություն զգալ փորձության ժամանակ: Կարող եք խրախուսել նրանց, ում ուսուցանում եք, խորհել այս ուղերձի շուրջ այս շաբաթ հաղորդությունն ընդունելիս:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ինչպե՞ս կհիշեք Փրկիչին այս շաբաթ:

Նախագահ Այրինգը խրախուսում է մեզ «Փրկիչին հիշելու համար ընտրել այն ուղին, որով ձեր սիրտն ավելի է մոտենում Նրան»:

Ինչպե՞ս է ձեզ հաջողվում «միշտ հիշել նրան» ողջ շաբաթվա ընթացքում (տես ՎԵՈՒ 20.77, 79):

Դուք ունե՞ք սիրած հատվածներ Փրկիչի մասին: Այս շաբաթվա ընթացքում դուք կարող եք ամեն օր նշել մի հատված և կիսվել դրանով ինչ-որ մեկի հետ:

Դուք փորձո՞ւմ եք մտովի վերհիշել օրհներգ կամ որևէ վեհացնող երգ, երբ տխուր եք լինում: Այս շաբաթ, միգուցե, կարող եք ընտրել մեկը, որը մասնավորապես Փրկիչի մասին է:

Ամեն շաբաթ հաղորդությունն ընդունելիս դուք խորհո՞ւմ եք Փրկիչի կյանքի և մեկ այլ զոհաբերության մասին: Դուք կարող եք պատրաստվել հաղորդությանը՝ վերհիշելով շաբաթվա ընթացքում ձեր կատարած որոշումը՝ միշտ հիշելու Փրկիչին, և ապաշխարելով այն պահերի համար, երբ դժվարացել եք դա անել:

Դուք աղոթո՞ւմ եք հնարավորությունների համար, որ կարողանաք ամեն օր կիսվել ավետարանով: Այս շաբաթվա ընթացքում փորձեք զրույց ունենալ, որը կենտրոնացած կլինի Փրկիչի վրա: Դուք կարող եք կիսվել Փրկիչի մասին ձեր վկայությամբ ընտանեկան

երեկոյի ժամանակ կամ դպրոցում խոսել ձեր ընկերոջ հետ եկեղեցում ունեցած փորձառության մասին:

Նպատակ դրեք այս շաբաթվա ընթացքում առանձնահատուկ ձևով հիշել Փրկիչին: Պատմեք ձեր նպատակի մասին ձեր ծնողներից, բարեկամներից, ղեկավարներից կամ ընկերներից մեկին: Շաբաթվա վերջում պատմեք նրանց, թե ինչ տեղի ունեցավ: Դուք կզգաք այն խաղաղությունը և երջանկությունը, որի մասին խոսել է Նախագահ Այրինգը:

ԵՐԵԽԱՆԵՐ

Եկեք Քրիստոսի մոտ

Տերը խաղաղություն է խոստացել մեզ, եթե մոտենանք Իրեն (Մատթեոս 11.28): Սա նշանակում է հետևել Նրա օրինակին և փորձել մնալ Նրան մոտ:

- Ակնածալից լինել հաղորդության ընթացքում:
- Ընտրել լինելու բարի և չքննադատել ուրիշներին:
- Սուրբ գրություններում կարդալ Փրկիչի մասին:

© 2016 by *Intellectual Reserve, Inc*. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, December 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12872 201

Ընտանեկան երջանկությունը բխում է արդարակեցությունից

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ոգեշնչում փնտրեք, թե ինչով կարող եք կիսվել: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը հասկանալն ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատքն առ Աստված և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք *reliefsociety.lds.org:*

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Աստված «հիմնել է ընտանիքները, որպեսզի մենք երջանիկ լինենք, սովորենք ճիշտ սկզբունքները սիրո մթնոլորտում և պատրաստվենք հավերժական կյանքին»:[1] Աստծո «երջանկության մեծ ծրագրի» (Ալմա 42.8) մասին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահը, ասել է. «Նրա ծրագիրը հայտարարում է, որ տղամարդիկ և կանայք կան, «որպեսզի ունենան ուրախություն» [2 Նեփի 2.25]: Այդ ուրախությունը վայելում ենք, երբ ընտրում ենք ներդաշնակ ապրելու Աստծո հավերժական ծրագրի հետ»:[2]

Քրիստոսակենտրոն կյանքը հաջողությունների ամենամեծ գրավականն է: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը (1928–2015) նկարագրել է այն որպես մի վայր, «որտեղ ուսուցանվում է ավետարանը, պահվում են ուխտերը և թևածում սերը», որտեղ ընտանիքները կարող են ապրել «հնազանդ կյանքով» և «Հիսուս Քրիստոսի ավետարանում խորը արմատներ գցել»:[3]

Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, ասել է. «Մենք կարող ենք որոշել, որ կանենք ամեն բան, որպեսզի երկնքի զորություններն իջնեն մեր ընտանիքի վրա»: Եվ ավելի հավանական է, որ մեր տներում մենք խթանենք սերը, ծառայությունը, հնազանդությունը և երջանկությունը, երբ մեր երեխաները «լսեն Աստծո խոսքը, ապա փորձեն այն հավատքով: Եթե նրանք անեն դա, կփոխվի նրանց էությունը, առաջ բերելով երջանկություն, որը նրանք փնտրում էին»:[4]

Քրիստոսակենտրոն տուն

Սուրբ գրություններում մենք ունենք Քրիստոսակենտրոն տների օրինակներ: Իր հոր՝ Լեքիի մահից հետո Նեփին լամանացիների երկրից հանեց իր ընտանիքին և նրանց, ովքեր հավատում էին Աստծո նախազգուշացումներին և հայտնություններին և ովքեր ականջ էին դնում Նեփիի խոսքերին: Այս նոր վայրում նեփիացիները կարող էին պահել Տիրոջ դատաստաններն ու կանոնները, և պատվիրանները բոլոր բաներում՝ ըստ Մովսեսի օրենքի (տես 2 Նեփի 5.6–10): Սակայն, նույնիսկ նեփիացիների մեջ ոմանք ի վերջո անհնազանդություն դրսևորեցին:

Եվ մինչդեռ մեր ընտանիքի անդամները կարող են նեփիացիների նման երբեմն հեռանալ արդարակեցությունից, Երեց Սքոթն ասել է, որ Քրիստոսակենտրոն տունն այնուամենայնիվ «առավելագույն վստահություն է պարգևում, որ մեր տներում կունենանք խաղաղություն և ապաստան»: Նա շարունակել է. «Դեռևս կլինեն շատ դժվարություններ կամ խոր կսկիծ, սակայն դժվարին պահերին անգամ կարող ենք ունենալ ներքին խաղաղություն և լիակատար երջանկություն»:[5]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Գ Հովհաննես 1.4, 1 Նեփի 8.12, 2 Նեփի 5.27

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Handbook 2: Administering the Church* (2010), 1.1.4.
2. Ռասսել Մ. Նելսոն, «Սելեստիալ ամուսնություն», *Լիահոնա,* նոյեմբեր 2008, 92:
3. Ռիչարդ Գ. Սքոթ, «Տան խաղաղության համար», *Լիահոնա,* մայիս 2013, 30, 31:
4. Henry B. Eyring, “The Teachings of ‘The Family: A Proclamation to the World,’” *New Era,* Sept. 2015, 5, 6.
5. Ռիչարդ Գ. Սքոթ, «Տան խաղաղության համար», 31:

Խորհեք այս մասին

Ի՞նչ կարող ենք անել մեր ընտանիքներում ավելի արդարակյաց ապրելու համար:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, September 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12872 201